

24246

891.99-82  
U-42

Chs

3673

891.99-82  
U-42

# ԳՐԱԿԱՆ ԳՈՐԱՐԴՆԵՐ

Մ Ր Ր Ւ Կ Ը

Գրեց՝ Ա. ԽԵՆՔԻ ԱՀԱՐՈՒՆԻԿ

Մ Ե Լ Ք Ո Ւ Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ը

Գրեց՝ Ա. ԽԱԶԱԿՅԱՆ

Զ Ա Լ Օ Ւ

Գրեց՝ ՀԱՄԱՍՏԵՂ



Գիւ 15 ս.

Տաղավար և Աջակի և

Թիւրթ, 1927

## Մ Ր Ր Ւ Կ Ը

Գրից Ահետիս Աշոքնեան

«Արե՛ւ, արե՛ւ, դուրս արի»  
ԺՈՂ. ԵՐԻ

## I

Կոռունկները կղղոցով լում էին մեր աշխարհից:  
 Հովհերը խիստ էին ու ծառերի տերևները սգւորած,  
 դոդովում էին վաղաժամ:

Այն տարին ժամանակն շատպում էր, չը գիտես  
 ուր... և մարդիկ ու կենդանիներ հրհրում էին իրար:

Աշուն էր. արևը չգիտես ե՞րբ էր ծագում, և վեր-  
 ջալոյսին ստուեները շատ վաղ էին իջնում. արշալոյս  
 ու վերջալոյս թարթում էին իրար:

Երեկոյ էր. մեր բակի դուռը շարաշիւնով թակեցին:  
 Հայրս, որ նոր էր վերադարձել արևեստանոցից ու  
 մտախոհ նստած, հանդարտ քաշում էր համրիչ, յան-  
 կարծ ցնցուեց այդ ձայնից ու մօրս նայեց:

Ծանօթ թրիկկոց էր — զիւղի զգիրը աշնան հարկն  
 էր պահանջում:

— Բալո ջան, շուտ վազիր, ասա՛ հայրիկս տանը  
 չի, պատուիրեց ինձ հարս, ու շտապով ոտքի ելաւ:

Ես վազեցի դէպի բակի դուռը որ զգրի հարուած-  
 ների տակ շարունակում էր ճռնչալ:

«Թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ»...

Վախվխելով դուռը բացի, առջևս կանգնած էր մեր  
 գեղի զգիրը, Քաշալ-Ցղեն, թանձր, կատաղի բերե-  
 րով, ըրզրդոտ փալտախը, աշքեին քաշած, ահազին



մահակը ձեռքին, ինձ նայեց խոժոռ ու մռմռաց:

— Հը՞, հէրդ ո՞ւր է:

Սարսափեցի, մանուկ էի հինգ-վեց տարեկան:

Հայրիկս... հայրիկս ասաց... չէ, չէ, չասաց, հայրի կըս, հայրիկս տանը չի, — թոթովեցի ես իսպառ շրփոթուած գզրի ահաւոր տեսքից:

— Ի՞նչ... ի՞նչ... տանը չի՞, — որոտաց նա մահակը գիլիս ճօնիլով, — առնը չի՞... շան ձագ, համ տունը չի, համ էլ՝ ասսաց...

Սյդ թշուառ ասացաք, որ իմ անհնարին խովվից յանկարծ թուաւ շրթունքից:

Հօրս մատնել էի:

Բղդէն թափով դէն շպրտեց ինձ դրան առաջից:

— Հիմա կը տեսնենք, թէ ի՞նչպէս տանը չի. ինծի Բղդէն կասեն, — որոտաց գզրը ու սլացաւ. դէպի մեր տուն:

— Հայրիկ, հայրիկ, — ճչացի ես լեզապատառ ու ստքի ելնելով, լալով վազեցի գզրի յետևից. Բայրս տանը չկար:

Մայրս արի էր. գզրի առջև ցցուեց զայրոյթով ու ճաց.

— Հը, ի՞նչ ես կատաղել, Քաչալ-Բղդէն, քո էլ քո ուկսն էլ, քո հարկն էլ. երեխսիս եղապատառ արիք. ի՞նչ ես փրփրել, ծէնդ զլինիդ զենել, անես զեղի թագաւորն ես. երեխային թակում ես, անօրէն, տիս, արնշաղախ ես արել երեխին:

Մայրս գրկեց ինձ: Քթիցս արիւն էր գալիս, ես չէի նկատնել — գիտին էի զարկուել ուժգին, այժմ միայն շօշափեցի, ձեռքս կարմրել էր, և լոցս սաստկացաւ:

— Շուն Բղդէն, — ճչացի ես արցունքի միջից:

Բղդէն չսենու տուեց իմ ծանր խօսքը. որի մէջ իմ մանուկ վիրաւոր հօգու բոլոր ցւոն ու ըմբոստութիւնը էր:

Մինչդեռ մայրս իմ երեսի արիւնն էր սրբում, զգիրը կանգնած էր իսպառ. կարկամուած այս տեսարանից, անելիքն ու ասելիքը չիմանալով, յանցաւորի պէս խնդիացած թոթովեց.

— Դէ, տէրութեան հարկն է, քուրիկ, մենք էլ թագաւորին ծառայող մարդ ենք. ի՞նչ անենք, ուզում են. ախր, քանի՞ օր եղաւ զնում եւ գալիս. ուստան չկայ ու չկայ:

Ուստան հայրս էր:

— Հասկացանք, — պատասխանեց մայրս միշտ զայրոյթով, — հասկարակիք. թագաւորի ծառայող ես դու էլ, Քաչալ Բղդէն. Երնէկ թագաւորին, քեզ պէս ծառայող ունին. տէրութեան հարկի, տէրութեան ցաւ ու զարհումար, զլուխներս տարաք. կը տանք էլլի, հօ չէք սպանի, մարենք, կը տանք. հօ չը փախանք, չէ. երեխան ասաց, թէ հայրը տանը չի, էլ ի՞նչ ես հարբ ու զօրք անում մեր գլխին:

— Ակիր երեխան էնպէս չասաց, — կմկմաց Բղդէն:

— Երեխան երեխսի պէս կ'ասի, Քաչալ-Բղդէն. վայրեզ, թէ երեխսայիս մի քան պատահի վախից. արիւնուայ ես արել, անաստուած Քաչալ. զլիսիս լաչակ է, ա հա քո մահակից քաշուողը չիմ. հայդէն, եկածդ ճամբովը յետ գեաւ. ու մէկ էլ էս դուռը չթխիացնես. կը տանք հարկն, անում եմ կը տանք...

Բղդէն այս անգամ իսպառ ոչնչացած, ծեծուած շան պէս քաջուեց հեռացաւ:

Մօրս սրիութիւնն ու իմ արիւնն ու արցունքը յաղթեցին:

— Շատ վախեցար, բալաս:

— Զէն, մայրիկ. ես չեմ վախսնում Բղդէնց:

Արցունքի միջից ժպտում էր մօրս ու համբուրում իր անուշ դէմքը:

Գզրից վախեցել էի , մանաւանդ արիւնից , բաց հըպարտ էի , ծնողներիս հոգսի ծանրութիւնն էի զգում իմ փխրուն ստուերին , ու այնպէս երջանիկ էի , որ հայրը իմ շնորհիւ ազատւեց գզրի անարգանքից ու ժեծից:

Խեղճ , անճար մանում էի , ու յանկարծ մեծայայ , այնպէս մեծացայ . արիւն էի թափել , իմ առաջին կաթիլ արիւնը :

Մայրի'կ , ուր է հայրիկը :

Հիմա կը գայ , բալաս , հիմա կը գայ :

Հայրս կտույներով փախել էր . ծածկուել :

Անկողին մտայ . ձիթէ ձրազը մեղմրւ պլազում էր , ու մեր խբճիթի պատերի վրայ խաղում էին անծայն ստուերներ խօսուն ու տրտում . որպէս մեր կեանքը : Սեան ստուերը բարի էր . առաստաղից մինչև յատակ ձգուած էր նա ու մէջքին պահում էր մեր յարկը կան . գուն վիթխարու պէս : Քիչ այն կօղմը մեր բանն էր ու գերանդին , որոնց ցոլքերը ժամուած էին իրենց կողդոջ ստուերներին : Աւելի հեռուն՝ տան խօրքում այլ ջոտուերներ կային , որոնց ծագումը չգիտէի , և որոնք օակայն իրար էին գալարում , փսփսում ու բաժանուում . ահայն դաւադիրների պէս : Ո՞ր տեղից եկան սրանք , ի՞նչ են շշնչում իրար — մանուկ միտքս զործում էր տանջանքով :

Անենից դաժանն ու չարը մեր աղի մեծ պահեստի — մի մեծ կաւէ ամանի ստուերն էր , այլանդակ մի հրէշ , առանց թաթերի , փարի վրայ շնթրկած , թանձր զլիսով , ահագին երախով մի կհնդանակերպ . որի ապահէ զոյտ աչքերը ցոլք էին արձուկում ու թաթուում ստուերներին : Ճրազի լոյսի դողդոջների հետ աղամանի ստուերը մերթ թագնւում էր իր թիկունքին , մերթ երևում , ծոծուում , գալարուում թրհասակուն ցնցու մնարով :

Մարսուո . կար մեր տան բոլոր անկիւններում : Մայրը հանդարս կարում էր , ճրագի առաջ կռացած : Ու այնպէս մենակ էինք ես ու մայրս — աշխարհիս դուրս և ստուերները խօսուն , իմացական , իրենց շարժումներով՝ պաշտօն էին մեզ :

— Մայրիկ , սղամանը ծածկիր :

Նա գլուխը բարձրացրեց կարից , անհանգուտութամբ իր շուրջը նայեց :

— Յիսուս , Քրիստոս , ասաց մայրս , երեխաս վախեցել է , զրողը տանի քեզ , Բղդէ , քնիր բալաս , ես արթուն եմ : Ու նա երկիւղածութեամբ խաչակնքեց անկողինս , ապա վեր կացաւ՝ երկաթէ շիշը բերեց դըրեց կողքիս :

Մայրս արթուն էր . ես քուն եղայ :

Զգիտեմ , հայրս ե՞րբ վերադարձաւ տուն :

## II

Չոռւնկները կղզոյով անցնում էին մեր երկնքով . շտապում էին . աշունը շուտ էր առաջացել , ծառերի տերեաթափը վաղուց էր վերջացել . աշնանացանը՝ նոյնպէս . հատ-հատ տեղեր կային միայն ամայացած դաշտերում , ուր ուշացած սերմացանը հե ի հե վերջին հատիկներն էր ձգում , քանի ձիւնը չէր կոխել :

Անորոշ ու անշող մի խունագէր բռնել մժնողութը : “ շնան անուշ տրտմութեան տեղ՝ կամացուկ զարթնում ու փառում էր դաշտերի և բնակարանների վրայ մի անորոշ ու խեղդող երկիւդ :

Զմեռը շատ մօտ էր , Արարատեան աշխարհի զուլում ձմեռը : Ցրտերն սկսուել էին : Կանգնած ջրերի երեսին գիշերները սառցի բարակ շերտ էր կապւում . ստուերապատ տեղերի եղեամը երեկու էր չէր վերանում :

Մասիսի ձիւնն իջել էր արդէն կիսից շատ վար, դէպէ լանջերը: Խմացական ու անողորմ մի բան ունէր այդ ձիւների ճերմակ ու ցուրտ զանգուածը, անձայն, ան շշուկ մի հրէշ, որ ասես վիթխարի լերան խորհրդաւոր կամքով օր աւուր, խաղում, իջնում էր դէպի դս շաւերը, դէպ իր ոտների տակ ծուարած խրճիթները:

Հովեր էին բարձրացել խստաշունչ թափով ու ողջ Նասիսից էին փում, նրա անյատակ, խաւար անդանդներից շղթայազերծ դաւրս պրծած:

Մասիսն էր հեռում ու ամէն մի հեքը՝ մի մըրիկ, որ եռում, ժայթքում էր նրա ծով արզանդից:

Մթնոլորտի մէջ մութ ցառում կար:

Միայն ազուաւներն էին սաւառնում բարձունքում, ոդի սարսուռի մէջ լողում ու կոռում անհոռնի համոյքով:

Ու մէր հարկը դեռ պատրաստ չէր...

— Էս զիշեր ջուրը սառել էր, — ասաց Բայրս մըտահոգ, երբ հայրս երեկոյեան տուն էկաւ:

— Աստուած ողորմած է. Աստծու պահած զառը գայլը չի ուտի, — պատասխանեց հայրս հանգիստ:

— Տնաշէնի մարդ. սրտիդ սար կը դրուի. ախր ո՞չ ձմրան բնաղունն ենք աղացել. ո՞չ մի հատիկ սերմ ձգել. ջուրը սառում է, շուառ ջրադաները կը կապուեն. սառած զետինն էլ սերմ չի առնի. էս մեր ծէթպիտը քաղցից կը կոտորուին, քա Աստուածը...

— Աստուած ողորմած է, սառւմ եմ, — կրկնեց հայրը սրտնեղած, — նա իր ստեղծածին հացից չի զրկի:

— Լողում ես կուտնկների կղղոցը. էսօ, բանի՛ ե բամ անցաւ:

Խաւար երկնքից գոռւնկների մի ու շացած երամ էր անցնում ու նրանց մեղմանուր կղղոցը, որպէս մի հեռաւոր մեղեղի, փռւում էր գիւղի ու սրթարթացող

դաշտերի վրայ:

— Ծտ սպում են, գիշերանց են զնում. արևի յետեւից են վազում. ձիւնը մօտ է, ասում են, շատ մօտ է, իսկ դու քո Աստծու ողորմութեան պոչից ես բռնել — իսկի չտեսանք էդ ողորմութիւնը. սև աղուէսի մորթ է գրաձել մեզ համար:

— Սիրտդ լէն պահի՛ր, կնիկ. մարդ որ իր սիրտը լէն պահի, ամէն բան կարգին կ'երթայ, Աստուած էլ կ'ողորմու: Սրտնեղութիւնը չարութիւն է. ալ կնիկ. Աստծուն դուր չի գայ: Ամէն բան մարդու սրտից է կախուած. յարն էլ բարին էլ այ էստեղ է. — ասաց հայրս, ձեռքը ձախ կրծքին դրած. — սիրտդ վախ մի գցիր. էսօ էգուց հարկը կը տամ, յետոյ իսկոյն արտը կը ցանեմ, ու ջրաղացը եղ վազեմ: Դեռ արև կ'ունենանք, աշունը բարի է. մէկ հարկը տանք, պրճնինք:

Այ այդ հարկը, որ վիշապի պէս խեղդում էր մեզ:

Հայրս ամէն առաւօտ արաղաղի առաջին կանչին վեր էր կենում, գարբնոց գնում ու մինչեւ ուշ երիկոյ անընդհատ լսւում էր նրա կռանի, հարուածների ձանը. պէտք էր հարկը վաստակել:

Եւ այդ հարկը ո՞ւթ ուուրլի էր... Հօրս ամբողջ ժամանակը, ուշք ու միտքը, բրտինքն ու վաստակը բռնել էր: Սրտ ու անդաստան, բնաղուն ու ջրաղաց սպասում էին հերթի:

Եւ Մասիսի լանջեւից ձիւներն իջնում, հա իջնում էին դէպի դաշտ ու բնակութիւն. և պաղ, սարսուեցւուիչ հողմերը փչում էին հա՛ փչում կծկուած խրճիթների վրայ: Ու հսկայ լերան ու իր մըրիկների հանդէպ հօրս կռանն էր շոնգում, սալը տնքում, և քըրտինքը ծորում հակատնց սև կայլակներով:

Հինաւուրց պայքար էր, և տաղի ու յամառ մեռնամարտ. ո՞վ պիտի յաղթէր:

Մասինը, թէ մուրճը:

Քրտիւթը, թէ արհաւելիքը ծմբան:

Եւ հայրս ու Մասինը երկուվ էլ ամէն առաւ օտ արևին էին նայում, մէկը պաղ ու անհոգ, որպէս մահի, միւսը՝ երկը ու պաղատական, որպէս խեղդող կարիքը: Արևից դուրս հայրս իր աղօթքն ունիք, իր հաւատն անդրդուելի:

Դաժան Մասին աղօթք չունիք և ոչ հաւատ, ինքն եւ աղօթք էր եւ հաւատը քարոզած:

Աշնան վախլուկ ժպիտը սակայն դեռ շարունակւում էր:

Ամէն առաւօտ արևը Մասին թիկունքից դարձեալ բարձր նում էր. նրա բարի ցուքերը դեռ հալում էին ջրերի երեսի սառցէ բարակ շերտերը, լիզում էին տերևազուրկ ծառերի բարակ ոստերին փարած զիշերային եղեամի սպիտակ սփռոցը. Մասին այրերիս դեռ քաղցած գայլերը դուրս չէին թափուած ու նրանց մահամարտուու ոռնոցը չէր խոռովում մեր արդար զիշերների խաղաղութենը:

Աստղեր կային յստակ երկինքին յակինթի պաղ ցուքերով, ու մերմակ ձիւների վրայով սուրացող մերմակ հողմերը վանում էին խաւարը ու զիշերները հովհարում: Միայն կուունկներն էին եռանկիւնի երամով մեր երկնքից անցնում խոռնապով. Գրերի մէջ չէին իջնում. երկար պարանոցներն առաջ ձգած, աչքերը շեշտ գէպի հորիզոն, զէպի անծայրածիր հեռուն, նր ըանք կղղում էին ու շտապում արևի յետեւից: Երբեմն նրանցից մէկն ու մէկը յետ էր ընկնում, մոլորւում զիշերային խաւարի մէջ. նրա կղղոցը դառնում էր լալագին ու անճառ. այն ժամանակ մայր երամը յօւզւում, փոթորկւում էր, եռանկիւնին քանդւում էր, կուունկները պրատում էին երկինք, նրանց կղղոցը դառնում

էր հաւար, միւնք որ սոլորուած թռչունը խռոնուէր երամին, և յուն շաբունակւում էր:

Մասինը թաղթում էր վերից:

Հօրս մուրճը զրնգում էր և ներքեւում, նրա տաների տակ:

Պէտք էր աշնան հարկը ճարել:

Ու զգիր մզդէն կանչում էր փողոցներում.—

— Հարկը բերէք, հարկը տէրութեան, հարկը...

— Զարհումար, զրողը տանի քեզ, լաւում էր պատերի յետեւում կանանց զապուած անէծքը:

### III

Աշնան հա՞րկը, ութ ուուրի՞:

Շշացուցիչ գումար էր մեզ հսմար:

Ու այդ ութ ուուրուց հինգլ միայն ճառել էր հայրս իր մուրճի հարուածներով. մնացած երեքը չկար ու չկար: Երեք ուուրի, — հեշտ է ասել: Պէտք էր կոպէկ-կոպէկ հաւաքել, երեխաների բերնից գտրել, գէթ մի ամրող ամիս մաի կերակրից հրաժարուել, ատամներով ծախքերը զրնատել, որպէսզի այդ նզովուած երեք ուուրին հաւաքուի:

Հայրս արհեստանոցից տուն էր զառնու երբեմն խապառ գատարկ ձեռներով. ալ աշնանը գործիքների պէտք չկար, վաճառք մկան, վաստակ չկար:

Երբեմն էլ մի խունացած, կեղտոտ թաշկինակի մէջ կասպտած բերում էր քանի մը սե փողեր, զրուայ վաստակը, որ թափում էր մօրս առջև:

— Էլի մի բան ելաւ էսօր, կնի՞կ. բե՞ր տեսնենք ի՞նչ կը դառնայ եղածի հետ:

Մայրս լուելեայն ոտքի էր ելնում, բաց էր անուժ տախտակէ իր հին սնտուկը, և հնոտիների, զգեստների ու կապոցների տակից դուրս էր քաշում մի զորշ,

հնամաշ կտաւէ քսակ ու միջն դրամը թափում էր թաղթեթ վրայ։ Ապա երկուսով կուացած ճրագի առաջ՝ ըսկըսում էին համարել։ Ուշադրութեամբ ու խնամքով զատում էին իրարեց արծաթէ և պղնձէ դրամները։ Մէկը սպիտակ փողն էր դարսում. մի ար' սև փողը, որոնցից կազմում էին փոքրիկ սիւնակներ, ամէն մի սիւնակը՝ մի ռուրի։ Երբ գասաւորումը վերջանում էր, սկսում էին համարել ռուրիները — մէկ, երկու, երեք... Վերջին օրը եղաւ հինգ ռուրի երեսուն և վեց կոպէկ։ Կոպէկները կազմում էին օրուայ վաստակը։

— Ութ ռուրին դեռ ուր է... պահուառում է էլի երկու ռուրի վաթսուն և չորս կոպէկ, — ասաց մայրա տրտմաւթեամբ։

— Հա՛, կնի՛կ, թարս օր էր. վաստակը մեծ չէ. վնաս չունի, Աստուած ողորմած է. բարով-խէրով եկող շաբաթ մի բան կ'անենք, — պատասխանեց հայրս յանցաւորի ձևով։

— Է՞ն Աստուածը... նրա ողորմութիւնն էլ հօ... ի՞նչ ասեմ, մեր գեղի զզիրն էլ նրանից զօրաւոր է, ձեռքին մահակ ունի, թիկունքին՝ ռէս, իշխաններ։ Լս՞ու սև ձայնը փողոցներում, Գափրիէլ հրեշտակապետի վողն է փշում նզովուածը այօր. փրկութիւն չկայ։

— Մի՛ Խօսիր էղպէս, այ կնիկ. ասածդ լաւ չի, Աստուած դուռ չի գայ. սիրտդ լէն պահիր, ասում եմ, սի՛րտդ, սի՛րտդ։

Մայրս ականջ չդրեց ողորդորներին ու շարունակեց. — Ութ ռուրի էլ աշնան հարկ կը լինը... ով էր տեսել. ներու հինգ էր, և տարի յանկարծ ինչպէս դարձաւ ութ. պետական հա՛րկ, չէ մի պետական ցաւ ու զանքուամար. կէսը ռէսի ու իշխանների անկրւշտ փորն է մտնելու երեխաններս թոնիր ձես մշահոտ չի

դայ. ակլոր են ու մի օր կուշտ, մի օր քաղցած կուանդթ թրիսկացնելով պէտք է յոպէկ-կոպէկ հաւաքես, արին-քրտինք թափիս զեղի զօրբաներին կշտացնես. հա՛, քանզուի էս աստուրը, քալդուի։

Այ կնիկ, անխելք բաներ մի ասա՛, ախր թավզի<sup>\*)</sup> են արել, հօ իրենց գլխու, իրենց քէֆին չի՛։

— Թովզի ն արել, ի՞նչպէս չէ, լաւ թովզի են արիլ. եկող-գնացող, հազար ու մի թալանչի պաշտօնեալի հետ լափել են, լակել ու ծախր զեղի վրայ դրել. թովզի են արել. հալրաթ թովզի կ'անեն. Դու կուանդ զարկ առաւոտից երեկոյ, քեասիբ-քիւսուբ թող իրենց ոտների միան ուտեն, օձերի հետ ջուր խմնն, քարը բարձ շինեն, նողն՝ անկազին, փուշ ու աատակ տրուեն, մի պատառ հաց ճառելու համար. Ու գեղի հաստափորները թովզի կ'անեն. թագաւորի թովզին վերից. սրանցը՝ վարից, ու զուրումը մեր զլխին. էս վէրան աշխարհի հիմն է ծուռ դրած, ա՛յ մարդ. հիմը քանդուի, բրիշան ըլնի. ախ թէ ձեռքս ճառ լինէր, կրակ կը տամ, կրակ, թող արար-աշխարհ փոթոթւի, սոխիր դառնայ։

— Մեղայ քեզ Աստուած, սեղայ քեզ Տէ՛ր... ա՛, կնիկ, այ կնիկ, — հայրս չվերջացրեց Խօսքը, լօնքերը կիտեց, զլուխն օքերեց ու ընկլմուեց մտածումների մէջ։

Մայրս նորից դրամները հաւաքեց, քսակն ածեց ու պատրաստւում էր կրկին սնտուկի մէջ փակել, երբ յանկարծ մեր դուռ ը թակեցին։ Մնաղներս իրար նաւեսին զարմացած։

— Պզիրն է՛ արգեօք, — ասաց հայրս։  
Դուռը նորից ծեծեցին։

<sup>\*)</sup> Հարկաբաժանումն։

Մայրսուշադիք ականջ դրեց:

— Զէ՛, սա զգիրի թըխկոցը չը, կամաց է, — ու զնաց դուռը բացեց,

Ներս եկողը էրկէն Փարին էր, բոստանչի Մանուկի մայրը: Այցը տարօրինակ էր և տարաժամ:

— Ի սէր Աստուծոյ, ուստա, մի ճար արա, — ասաց պառաւը աղերսագին, ստուդ եմ եկել, տղաս բանտ տարան անսաստաւածները, մի ուուրի է պակասում անտէր հարկից: Բնադրուն չենք աղացել, արտը չենք ցանել, խեղն տղաս էլ բանտ զնաց, ձիւր դռնիրս է կոխել, մի ճար արա, Աստուած օրինի քո օջազը, քո մուրին ու զնտանը ձեռք բռնի: Էդ մի ուուրին հոգու պարտք տուր. Էզուց տանեմ տղաս հանեմ բանտից: Մանուկը գիտես, քո պարտքի տակո չի մնայ. մի օր էլ նա քո հաւարին կը համուի: բարաներիդ սիրուն. մի ճար, մի հնար:

Պառաւը խօսում էր, աղերսում ու աչքերը սրբում,

Մայրս դրամով քամկը ձեռքին՝ մնաց կանգնած, ինչ անելը չիմանս լով: Հայրս դադարեց համրիչը յրիշկացնել, ու զլուխը մտքերով ծանրացած՝ քաշ ընկաւ կրծքին:

Խնդիրը դժուարին էր.

Պառաւ Փարին ծնողներիս հոգսին ու խոռվքին անձնոթ: շարունակում էր գշշալ ու աղերսել.

— Գիտեմ, վաղն էլ կը գան էն մի հատիկ կովս կը քաշեն գեղամէջ ու կէս գնով կը ծախեն... Տէր ու տիրական չունենք, պաշտպան չունենք. եղած էն տլուզ տղաս է, էն էլ բանտ տարան... Ուր երթամ, ում գանգատուիմ, ո՞ր ջուրն ընկնիմ,

Հայրս լուռ էր. մայրս գուհատ էր ու մռայլ, քրսակը ձեռքին դողդողում էր ջղայնօրէն, Մարթ ընդ մերթ նրա փակ շրթունքները ձգնաւում էին ու մի հեղ-

նուկան ժպի՞ո, թէ՞ ներքին ցաւի կծկու մներ աւերում էին դէմքը վայրինապէս և անթարթ աչքերի պաղ հաւացքը մնում էր քարացած պառաւ Փարիի վրայ: Հօրս խոհւ և տրտմութեան առաջ, տանջանքի փոթորիկ էր, որ կամաց-կամաց եռում էր մօրս հոգում: Նա շրթունքներն էր կծոտում չճշալու համար:

— Փա՛րի քուրիկ... ա՛յ Փարի քուրիկ... ինչի՞ ևս մեր հոգին հանում..., ախր, ախր... ասաց մայրու սրտ-նեղած ու խօսքը չվերջացրեց.

Փարին խսպառ շփոթուեց ու արցունքի միջից մերթ հօրս էր նայում ապուշ-ապուշ, մերթ մօրս:

— Աստուած չանի, Աստուած չանի. Աստուած ձեր մէկը հազար անի, — մըմնջում էր պառաւը:

— Ոխր ա լէն սար իր ձիւնն ունի, — շարունակեց մայր, հինգ վկո ծէթ ու պէտ խմորկեր ունինք, ողջ աչքերը տնկել են մէկ կուանի. մի չարչարիր մնաց, Փա՛րի քուրիկ...

Փարին չհամոզուեց, կամ չհամկացաւ. նա շարունակում էր չարչարել ծնողներիս անողորմ ձեռվի:

— Զեր բանը ջոկ է, — վշվշում էր պառաւը. — Ռւստան ողջ ընկի, Աստուած թևին ոյժ տայ, մէջքին զօռութիւն. օրինուած կուանը մէկ թխկացնի, ոսկի կը ծլի չորս կողմէց, հարկն էլ կը տայ, հազար ցաւ էլ կը հոգայ. ես ո՞ր հողը տամ զլիխա, ձեռքս ում վէշը ծգիմ...

Հօրս կուանը ոսկի՞ է ժայթքում... Եթէ պառաւ Փարին այնքան թշուառ չինէր, կարերի էր խորհիլ, թէ նա մեզ հեղնելու է եկած: Սակայն նա հեծեծում էր, ծնկները ծեծում, պաղատում:

— Տղաս բանտում... կովս կը ծախեն...

Հայրս դարձեալ լուռ էր ու զուարուն. հարցական հայեացքը մի քանի անզամ մօրս դարձրեց:

Հասկացա՞ւ մայրս արդեօք, թէ նա պատաստ է զոհացնել պառաւին, բայց բաշւում է իրենից երեխ, որովհետև նրանց հայնացքներն իրար հանդիպեցին, որպէս երկու ոխոյեաներ, մէկը հայցող ու տրտում միւսը՝ զայրայած հօրս դէմ, նրա մեղկութեան ու փափկաբռտութեան համար. աշխարհի չարութեան գէս, կարիքն դէմ և մանաւանդ՝ այս պառաւի դէմ, որ եկած էր իր խիղճը չարչարելու,

Եւ լանկարձ մայրս ջղային շարժումներով բաց արեց ձեռքի քամկը, դուրս քաշեց այնտեղից մի բուրի ու շպրդց պառաւին:

— Աստուած օրհնի ձեր օջաղը, — ասաց պառաւը, դրամբ վերցրեց ու երերալով դուրս գնաց գոնից:

Լուսիթինր շարունակում էր, մի լուսեթին, որ փոթորիկով պիտի միրջանար. հայրս երկի ալդ զգալով էր, որ նորից սկսեց հանդարտորէն չխկացնել համրէը. այս վերջին պարագան եկաւ մօրս համբերութեան բաժակը խսպառ լցնելու:

— Հի՞, պրծանք ուստա, — ասաց նա հեզն օռէն ու խստաձայն, էնպէս էիր նայում ինձ, ասես մեղքն իմն է, որ Փարին հարկը չի տուել մեղքն իմն է որ նրա տղան բանան է մտել, ես եմ, որ նրա կովը ձախուու պիտի հանեմ.. Պրծանք, տէ հիմտ զորկ կռանդ, զարկ, թող սոկի ծլի, չչ՞ Փարին ասաց, հեռուից խալիսի սչքն ենք հանում, մօտիկից՝ մերը. Մասոին նայեցի՞, յօթիրից մահ է կոթկաթում..

— Աստուած ողոմած է, — եղաւ պատասխանը,

— Աստուած, Աստուած, — նշաց մայրս ու շարունակել չկարողացաւ, նոխ ջղայնօրէն բրդչաց, ապա խելայիշ քրքիջը լացի փոխուեցաւ...

Հայրս անյօս մեղաւորի պէս, գլուխը քաշ՝ լուռ նայում էր ու չըխկացնում համրից,

IV

Դա, ձեալ մի շաբաթ անցաւ.

Հօրս կռանր զրնգում էր անվերջ պառաւ Փարին մեր գործն ու շացուց. հայրս զարկում, հա՛ զարկում էր սալին. ոսկու փոխարէն կածեց էին ցայտում և կը ուան ու սալ թնդում էին միասին:

Կռունկների չուն վերջ առաւ. նրանց յետին երամը մի քանի օր առաջ անցաւ մեր երկնքով աւելի կըծ կուած, աւելի խուճապած երամով ու անվերջ կղզոցով:

Արսն էին կանչում, զերմ կենդանարար արեւը, ու գնացին ամէ՞նքը ամէ՞նքը...

Ու այն առաւօտ հովն աւելի խիստ էր, աւելի ցուրտ: Գետնի երեսից էր փչում լիզելով հողը, ձիւնի տեղ էր բացում. չոր տերեւ ու խօս նրա շնչի տակ ցատկրում էին, պարում, ապա այլանդակ պտոյտներ գործերով՝ տարբում էին վեր, վեր, ցրիւ տարիս դաշտիրում:

Մեր ուղղաձիգ գալար բարտիները հովի ուժգին թափի տակ կռանում էին, մղկում, կրկն ծառանում, կրկն կռանում աղօթաւորի պէս, որ պատրաստում է ծունկի գալ:

Կարծր հաստարժատ կաղամախիները տակաւին յամառօրէն զարդարուն չոր գեղնած տերևներով խշտում էին, թաւ շէկ գլուխները ցնցում զայրացած, ասեց երենց չոր սազարթի միջից անհանոյ հոգը դուրս վանելու համար: Կտուրների վրայ, խոտի գեղերը ծոռւմ էին, դոգամ, ու երեմն քամու մի ու մեղ հսանք շորթաւմ էր մէկ երկու խօրձ, դէպի վեր շպրդց քրքիջը ու ցրիւ տալիս երկնքու խիստին:

Ճեռուն, սպիտակ մշուշը ծածկել էր լեռները, անձը ու թանձը ամպեր բարձրաց ում էին, իջնում, իրար

յիտեից, իրար զլիսին, իրար թիկունքին հռվերի խենթ քմահանոյքի հետ:

Ոյն օրը շատ մթնեց:

Ամպամած, ու երկինքը կախուեց վա՛ր, վա՛ր:  
Ոչ մի ասող,

Հովերը զիշքուայ դէմ աւելի մեծացան ու թափ առան խաւարի հետ. նրանց ցուրտ վզվզոցի մէջ գնդանական մի կիրք կար վարագ ու խօսուն: Ու այդ ձայներից գուրտ զիշքուայ մէջ էլ ոչինչ չկար. երկնքի ու երկրի տէրս էին, ասելիք ու անելիք ունէին միայն խաւար զիշքին:

— Ցուրտ է դուրսր,— ասաց հայրս ներս գալով, — քամին էլ շատ խիստ է:

— Միայն թէ անիբաւ ծիւնր չեղուէր.— Մրմնջաց մայրս, — արտ ու զրադացը կը մնայ:

— Փառք Աստուծոյ, էսօր հարկի ցաւէց պրծանք, Օրն օրհնուած էր:

Ու հայրս, տեղ բւնելով, զրպանից կապած թաշկինակը հանեց, մի կոյտ արծաթ ու պղինձ դրսմեր թափեց յատակին:

— Դէ՛ն, շուտ արի, նստիր համարենք, սնտուկի փողն էլ բեր:

Հօրս տրամադրութիւնր յաւ էր:

Անմիջապէս սկսեցին համարել:

Արդէն իսպառ զիշքը էր:

Դրսում հովը քանի գնում սաստկանում էր: Ծուղներս գրամ էին համարում, ու մերթ մէկր մերթ միւս ու ուսիսը բարձրացնում էր հերդիկին նարում, ականջ դնում քաւու ոռնոցին ու կրկին շարունակում հաշիւր:

Հովը ծեծում էր տան գուռը, որ ծխսանի վրա դողդողում էր, սողնակը չխկխկում ու աւելի հեռուն. բակի գուռը բաց խուփ էր անում ու շառաչիւնով

զսրկւում յետ ու առաջ:

— Ոյնչ, քամին է, — հանգստացնում էր հայրս, — իէ, տեսա՞ր, ա'յ կնիկ, ահա ութ ուութին, մի բան էլ աւելի: Հիմա թող Քաչալ Բղդէն գայ, վաղը արտը կը ցանծնք, միւս օրը ջրաղաց կը վազեմ. Աստուած սարը կը սեսնի ծիւնը կը դնի. իբ ստեղծածին մի կտոր հացից չի զրկի:

Բակի գուռը նորից շարացիւնով զարկւեց:

— Հիմա էլ երկնքի մեծ Բղդէն է մեր գուռը ծեծում. էն մէկից փախար պրծար, սրանից ո՞ւր փախչիս. Էս քամուց վախնուում եմ:

Պատասխանի փախարէն հայրս ստքի ելաւ, գուրս գնաց բակի գուռը փակեց ու յետ եկաւ:

— Ուժեղ քամի է, ամպերը կը ցրի, — ասաց նա: Մալրս հերդիկից նայեց, զլիսին օրօրեց թերահաւատորէն:


— Ոչ մի ասող, երկնքի աչքերը կուրացել են. աղօթիք ճամբաները փակուել, մոլորուած քարւան ենք, որ կողմը դառնանք մութ է... Կռունկները գնացին, արևն էլ հետները. էրնէկ նրանց, ա'խ, մարդ իւսանայ, թէ ո՞ւր են գնում:

Մայրս ծնկները գրկած օրօրւում էր ու խօսում ինքն իրան:

— Կռունկները գնացին, ու գարնանը նորէն կը գան արևի հետ, սիրադ լէն պահիր:

Մեր կտրին մի ծանր բան ընկաւ թրմբոցով. Քամին մեր խստի դէզը քանդեց ու ցրիւ էր տալիս:

Դրսում ա'լ սև հովերի վզաց չէր, այլ հազար ու մի ձայների այլանդակ մխոր. մէկը հեծեծում էր, մէկը բառաչում ու տնրում, մէկը քրքջում էր խենթի պէս. միւսը հոնքուրհոնքուր արտասուում. կային որ հաջում էին իրար վրայ, իրար կրծստում, խեղդոտում մռմը-



ոռողով, ու կրկին հեկեկում ու լալիս :  
Դժոխք է՞ր :

Մեր խրճիթը՝ դողդողում էր. դրսդում հիմքից .  
հովզ էր սուրուս ներս բոլոր նեղքերից. գուռոր վախից  
Եզուն բռնած մարդու պէս այդանդակօրէն վիվլում էր,  
ու ամբողջ շէնքը կարծես պատրաստում էր մրրիկի  
սարսափից թափ առնել փախչել: Ճըսգի լոյսը թըթթր.  
ուում էր անհանգիստ, ու քամու հեքի հետ ծանօթ  
ստուելները պատճերին ցատկրաւում էին ծիւաղների  
պէս և աղամանի զոյգ աչքերը կայծկլտում էին:

Մեր շունը կտրան դէզի տակից, իր սովորական  
մեղից ցած փախստ բակը, հկաւ դրան առաջ կծկուեց  
ու կաղկանձում էր անճառ:

Մասիսն էր շարժուել իր տեղից. անդունդները  
բաց արել ու բոլոր նողմերը դուրս թողել աշխարհի  
վւայ:

Մրրիկ էր, անպանձ ու աւերիչ մրրիկ...

Յանկարծ հերդիկից սառն ցնցուղներ մաղմնցին ժիր  
զլսին :

Զի՞ն է... ձի՞ն է արդեօք...

— Անձրէ է, — ասաց հայրս. — փառք Աստծու,  
ձին չի, քամին կը ցրի ամպերու:

Մայրս անշարժ էր, լուռ, ծնօթներն իրար սղոած՝  
նայում էր ճրազի պլազան ռոցին:

Մրրիկը չէր մեղմանում. քամու կատաղութիւնը  
համաւ անասելի չափերի: Մօտիկ լսուեց մի խացու-  
ցիչ որոտ, մեր հարևանի բակում թթենին շառաչիւնով  
ընկաւ. մեր շունը նորից կաղկանձեց ու քամու նո  
սանքի հետ ուժգնօրէն զարկուեց դրանք. որը լայն  
բացուեց և մրրիկ ու շուն ոռնալով ներս ընկաւ մեր  
խրճիթը:

Զի՞ն է՞ր... բուք-բորան...

Զիւնի մշտիկը մեր տանն էր, մեր յարկի տակ. թո-  
նիք ու կուժ, խուփ ու անկողինների ծալք վայր-  
կեանապէս ծածկուեցին ծիւնի բանձր շերտով, որ  
կատաղի հողմը բացդունից վիչում էր ներս: Մեր ճրա-  
զը մարեց յանկարծ ու առանց չարչարանքի: Օրօր-  
ցում քնած փոքրիկ եղբայրս զարթնեց ու ճուաց:  
Մրրիկը ծեծում էր մեզ մեր թռսիրի շրթին, մեր օջա-  
զի կողքին: Նրաւաշխարհում էլ անկիւն չունէինք,  
զլուխ զնելու տեղ չունէնք: Վիշապն էր զարթել ու  
մռնչում, հայրը լեռների հինաւուրց վիշապը. շունը  
կադիանձում էր պատին կծկուած:

Հայրս թռաւ տեղից գուռուք փակելու. մայրս ճրազը  
վառեց, ապա շտապեց դէպի լացող երախան. օրօրում  
էր ու խօսում:

«Քնի՛ր, բալա, քնի՛ր, բալա, կռունկները թռան,  
թռան, կարմիր արևը տարան, տարան, գարնանը էլի  
կր գան.

«Քնի՛ր, բուլա, քնի՛ր, բալա, մեր բանն էլ Ասսուած  
գիտէ, հարիկդ կռանի տակ ծիլ ծիլ ոսկի, հայինը  
հովեր, հայինը ցաւեր, սկը սկ ազռաւներ, քի՛ր բա-  
լա. քնի՛ր բալա»...

Դժուար էր զիտնալ, երգում է մայրս, օրօր խօ-  
սում, լայի՛ս, անիծում, թէ հեգնում — այս բոլորը  
միտսին էր:

Ու յանկարծ մի ուրիշ ձայն դրան կողմից՝ մրրիկի  
մռնչինից բարձր.

— Հա՛, հա՛, քնիր բալա՛, ջանիդ մատաղ, կռահս  
ոսկի կը ծլի, գունջ-գունջ ոսկի:

Հայրս էր. թիկունքը փակ դրանը տուած, զլուխը՝ բաց, բազուկները տարածած աներևոյթ ոյժելի գէմ, աչքերը՝ վառ, գէմքը գնուական, նա փակել էր մրրկի ու զուլումի առջև, մինչդեռ սողնակը վլվլում էր ու դուռը հառաջում էր ձիւնի դժուարին բեսի տակ: Այդ պահուն հայրս ամրող ըմբոստացումն էր ու կեանք:

Ես երբեք չէի տեսած նրան այս աստիճան հզօր ու հումկու. նրա հասակը աչքիս բարձրացել էր ու դաշճել աժտահա, թիկունքը լայն ւ յաղթ, բազուկները կուռ ու ծաստատուն, և ձայնը պարբերի ու խրսխտ միաժամանակ:

— Վա՛խ կնիկ, դու իս հոգին հանեցիր քո վայզայով, — շարունակեց հայրս, — ի՞նչ ես վշվշում, ի՞նչ ես սուզ անում, աշխարհ չփլաւ գիխներիս: Կոռ՞ւնկ ես երազում, զարնան արե՛ւ, անխելք կնիկ, կոռունկ և արև մարդու հոգում պիտի լինին, մարդու հոգում. վա՛, նրան, ով հոգում արև չունի ւ ձեռքին կուան...

Մրրիկն էր մոնչում գրսում, յարկ ու ռնակութիւն դոզդում էին, հիծեծւամ հովի շառաչի տակ և մայր հողը տերում էր ծանր ու խորունկ իր հին կարօտը՝ «Արե՛ւ, արե՛ւ»...

Այն տարին կոռունկները շուտ հեռացան, մեր աշխարհից, Ծլտիերը շուտ ընկան, աւերիչ մրրիկները վաղաժամ ելան, ու մենք ձմրան բնաղուն չարինք, արտ չըցանեցինք:

Յոյսերս մնաց հօրս բազուկն ու կուանր, զարնանացան ու գարնան արևը կենսատու, երբ կոռունկները նորէն կը կղզան մեր երկնքի տակ իրենց ողջոյնը զարթնող կեանքին:



## ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Դրեց Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

### I

Զեռքդ դրածի պէս միշտ կը գտնէիր նրան սրճարանի իր յաւերժական անկիւնում, ակնոցը՝ բթին, ծուխը՝ թլրսին, լրազիրը՝ ծեռքին, առջեւ վայտէ հասարակ սեղան, վրան սուրճի գւաթներ, զիրք, զբիչ, թուղթ ու թանաք:

Մոլքոն վարժապետը 55 տարեկան մի մարդ էր, առողջ ու միջահասակ, ալեխառդն մազ-մօրուքով. առանձին ժամանակ լուրջ ու խոհուն դէմով, իսկ մարդկանց մէջ՝ ժամիտր բարի աշքերում և անուշ ու խելացի խօսքը զբժունքի վրայ:

Հասակն առնելուց յետոյ սկսեց պարարտանալ. այնպէս որ յաճախ բարեկամները կատակով առում էին նրան.

— Վարժապետ ջան, փորքդ օր-օրի վրայ առս զկ'երթայ:

— Ե՛ն, ես էլ օր-օրի վրայ յետ կ'երթամ:

Մինչեւ զրեթէ 50 տարեկան հասակը ձխական դըպրոցում ուսուցիչ էր նա հայու լեզուի և դասամիջոցներին աշակերտների վրայ հակիչ բայց, երբ օրէնք գուրս եկաւ, որով գասատուներից պատշաճ վկայական էր պահանջւում, նա այդպիսին չւնենալով, դարձաւ լոկ վերակացու:

Եւ երբ ուսուաց պետութիւնը գոցեց հայկական դպրոցները, նա էլ հազարաւորների հետ մնաց բացը: Սակայն 25 ամեայ երկար պաշտօնավարումից մի վու-

ՔՐԾ ԳՈՒՄԱՐ ՌԵՆՔՐ յետ ծզած, որ մի բարեկամի մօտ պահ էր տուել. որից ամսէ-ամիս մի բան էր առնում և խնայողաբար ծախսում:

Բաւական էր այդ գումարը իրեն, որովհետեւ չոր գուշն մարդ էր և սակաւապէտ, ամէն բանի մէջ ժուժկար:


Նա չէր ամուսնացել, և չէր ամուսնացել սկզբունքով. նրա ասելով — «Կինոր զարտուղի հոլովուող էակ է», և լուսաբանում էր աւելացնելով, որ եթէ մտնի կեանքիդ մէջ, այնպէս կը խնճէ ուղեղդ և ուղեղդ. որ հօրդ տան դուռն իսկ չես ճանաչի. մինչդեռ խելքը նըրա համար է, որ մարդ գտնի իրեն առուն և զնիտ սրտով երթայ մինչև վերջը:

Բայց այդ սկզբունքը նա չէր ուզում տիեզերանայնիւ. բեղիակառակը ստեապ ասում էր թէ՝ — «Աշխարհը կնկայ վրայ է շինած» — ու կնիկն էլ սուսին. թէև վերջին հատուածը միշտ քթի տակ մրմնջալով.

Երբ վերջին տարիները լուրջ թէ հատակով իր տարիքները ասում էին նրան թէ՝ — էս չեղաւ, վարժուակեած, մենակ մնացիր, լու կը լինի՝ մի կնիկն ճարես. քանի շաս. ուշ չէ:

Նա էլ կատակով պատասխանում էր:

— Ես էլ հա՛-հո՛ւ, էս էլ կնիկ դառնալու վրայ եմ. էլ կնիկն ինչո՞ւ է պէտք:



Նո ապօռմ էր հօրենական իին պզտիկ տնակում. այսին քն՝ զիշերները միայն քնում էր այնտեղ. որովհետեւ վտղ առաւօտուց սրճարանումն էր ուստի մխմում ու յատմիջօրէի հանգիստ առնում: Հոն էր կարդում ու գրում. Այսպէս, ամրող օրը, չհաշուս այն պահերը. որ անց էր կացնում այս կամ այն բարեկամի արհեստանոցում կամ խանութում:

Անգրագէտների նամակ գրողն էր նա ու նամակները կարգացողը, մուրհակներ ու պայմանաթղթերը գրողը, վէճեր և աքրողն էր ու խոռվակներին՝ հաշտեցընողը: Եւ իր այս անհրաժեշտ, օգտակար գերի համար ամէնքը յարգում էին նրան, շարունակ հիւրասիրում, կարծես, այս կերպով վալ ձահատոյց լինելով նրան. որու ձամարեա թէ ծուխի և սուրճի համար գրամ չէր ծախսում նա, — և բացառութիւն չէր նաև ճաշը, որ շատ յաճախ ծանօթ-բարեկամ հրաւիրում էին նրան սեղանակցելու համար.

Եւ արդէն սովորական բան էր հայկական փոքրիկ քաղաքներում այն երևոյթը, որ մարդիկ չէին կարող հացի հստել տռանց հիւրի. ծխում կամ սուրճ խմում, տռանց որիշին հրամացնելու. ուր մնաց բոլորից յարգուած վարժապետի վերաբերմամբ, որին պատուելը պատիւ էր և պատուացի համար:

Այս ի՞նչ էր մնում իրեն ծախսելու — հագուստ, լուացք և ուրիշ երկրորդական պետքերը, որոնց համար իր խնայած զրամը լիսուի բաւարար էր:

Այն սրճարանը, ուր մնակում էր վարժապետը, վազուց կորցրէլ էր իր տիրոջ անոնքը և կոչւում էր «Մելքոն վարժապետի սրճարանը»:

— Ո՞ւր կ'երթաս, ո՞ւր էիր:

— Մելքոն վարժապետի սրճարանը:

Եւ համբաւաւոր ժամագրավայրն էր նա քակաքի արհեստաւոր դասի: Այնտեղ լաճախում էին արհեստաւորները և գիշաւորապէս վարպետները, և նաև մեր խանութպանները:

Ամէն օր ճաշեց յետոյ ու երեկոյին, իսկ կիրակի և տօներին, ողջ օրը բոլոր, հաւաքւում էին այդ անուանի յարկը տակ պատուաւոր վարպետները, խօսում

էին քաղաքական և ազգային հարցերի մասին, իրենց համբարի և քաղաքի գործի և գեղքերի մասին, հարցնում էին վարժապետի կարծիքը շօշափուղ իրերի մասին, և ուշիուշով լսում էին նրան, իրեւ հեղինակաւոր մի անձի:

Եւ արդէն վարժապետն էլ ամէն երեսյթի մասին իր ուրոյն կալծիքն ունէր՝ խտացած մի երկու բառի մէջ, որ նման ժողովրդի իմաստուն ասածնարին, ասում էր տեղին ու հարկին:

Բացի այդ, նա ամէն օր կարդում էր նրանց համար օրուայ լրապիրները և մեկնաբանում աշցրերը թակ ձրմ րան երկար զիշտները կարդում էր կամ պատմում զանազան վէտերից կամ ազգերի պատմութիւններից: — Մելքոն վարժապետը հիմի մեծերիս վարժապետն է, — լրջօրէն ասում էին արհեստաւորները, և դո՞ւ էին իւրենց վարժապետից:

Երբ սրճարանը օրուայ որոշ ժամերին ամայի էր դառնում, վարժապետը լրութեան ու մենութեան մէջ՝ ամփոփուած իր տեղում, աչքերը՝ գույ, ծխախոտը շրթունքից կախ, կծկուած իր հրով մէջ խորհում էր, խորհում էր նա իր տեսածի ու լսածի վրայ, անձնական տպրումների և ուրիշների փորձերի վրայ. և խորհում էր ժամեկուով, որ ընդհատում էր միայն հանգած ծուխը վառելու համար:

Եւ երբեմն տանկարծ աչքերը բաց էր անում, մի սուրբ էր ապստում, ապա սեղանի արկդիզ հանելով մի կաշեկազմ տետր, որի առաջին էջի վրայ խոշոր նրանակուած էր «Մատ Մատեան» խորագիրը, և այնտեղ հաստատուն ծեռքով, կապոյտ թանաքով մարմացնում էր իր խորհածի արդիւնքը. — երկու խօսք, մի մռածում, մի կարճ ու կտրուկ միտք:

Այդ սովորութիւնը ունէր մօտ տասը տարուց իվեր, եւ ապա նորից սուզում էր իր ներաշխարհն մէջ, մինչև որ սրճարանը լցւում էր մարդկանցով և նրան արտաշխարհ հանում:

— Վարժապետ ջան, ի՞նչ ես մաքում, հերիք է: Թէ՛, սուրբ, համառնքդ ի՞նչ է ու զուժ, — դիմում էին յանախորդները, միաժամանակ ծխատուփնին սպասարկին հետ ուղարկելով նրան:

  
Մելքոն վարժապետի կեանքը զրեթէ ըրլորովին թափուր էր արտաքին դեպքերից և արկածներից: Նա չունէր կեանքի պատմութիւն. իր հայրենի գաւառից դուրս ոտք չէր գրել. ոգելից խմիչքներին թշնամի լիներով՝ միշտ զգաստ, իր կղուուած ընաւորութեամբ միշտ անայլայլ, որով ո՞չ մի մարդու հետ վէճ ու կըսիւ չէր ունեցել.

  
Միայն պարտաճանաչ վարժապետ էր եղել թէ՛ ուրիշներու և թէ՛ նոյնիսկ իրեն հանդէպ. — և ուրիշ ոչինչ: — Աշխարհը շատերի համար, — ասում էր նա, — կրուի ու զիտացաւի տեղ է, ինչ համար նա պատուհան է, որտեղից նայում եմ աշխարհի բաների վրայ, մտածում եմ ու ծուխս քաշում:

Եւ թէպէտ զիտակից կամ գովազ հիւոււ էր պահուած իրեն աշխարհի խաղերից, սակայն երեք անախորժ դեպք հանդիպել էին նրան, — հակառակ իր զիտակից կամքին:

Մի անգամ, Երեկոյեան դէմ, ամառը, գետը լողնաւուց վերադարձին, քաղաքից զուրս երկու սրիկայ յարձակուել էին վրան, կողոպտել էին ժամացուցն ու քասկը:

Այդ զէպքի վրայ նա այլևս ժամացոյց չառաւ, ասելով. — «Մարդ ինչքան քիչ մտածէ ժամանակի,

ինչպէս և մահի մասին, այնքան շատ ժամանակ կ'ունեած»:

Իսկ լոգնալու գնալիւր, եթէ մենակ էր, դրամ չէր առնում նետը, խորհելով թէ ամարդ որբան չունենայ, գողց վախ չի ունենայ»:

Սի անգամ էլ ուռւաց գալսմի ոստիկաննիրը բրունել էին նրան, մեղադրելով թէ՝ ժողովրդի մէջ յիդափոխութիւն է քարոզւս. Ոստիկանապետի մօտ նա անկեղծութեամբ խոստովանել է, թէ՝ ինքը թէև ազգամէր մարդ է և սզզի ս զատութեան տենչացող, բայց յեղափոխական չէ, ըստովին իւ կարծիքով, հայ ուժերից գեր բան է թիւրքի և ուռւսի բերլից Հայաստան ազատեր:

Զն այնով այս անկեղծ խոստովանանքին՝ նրան բանտ ևն նետել, ուր մի ամիս մնալուց յետոյ միջնորդութեամբ արձակել են:

Երբ սրճարանում բոլորը ուրսիս սրտով շնորհաւորել են նրա ազատումը, նա անտարեր կերպով պատախանել է. — «Ծուխս ու սուրճս անպակաս լինէր, ինչքան կ'ուզէին, թող պահէին, բանտն էլ աշխարհ է աշխարհն էլ մի բանտու:

Երրորդ գէպքն էլ այսպէս է պատահել: Վարժապետը դպրոցական ամառուայ արձակուրդին երեք ամսով գնացել է զաւառի ջերմուկները լողնալու ոսկրացաւ ից բուժուելու համար, և իր տօւնը երեք ամսով գարձու է տուել մի այրի կնոջ: Վերադարձին խնդրել է կնոջը, որ թէ գարծը տայ և թէ ազատէ ընակարանը. կինը հրաժարուել է կատարել նրա պահանջը, պատճառաբանելով թէ՝ հիմա փող չունի և թէ ուրիշ տօւն դեռ չի գտել: Վարժապետը մի շաբաթ պահանաժամ է տուել, ինքը այդ միջոցին թէև ստիպուած լինելով պահպում գիշերել:

Շաբաթը լրացած, նորից եկել է: Կինը այս անգամ մր ամբողջ ամիս միջոց է պահանջել: Վարժապետը ոկզբում չի համաձայնել, ապա համաձայնել է այն պայմանով, որ կինը գոնէ վճարէ գարծը, որպէսզի ինքն էլ կարողանայ պահպում ապրել, կինը դրան էլ չի համաձայնել: Վարժապետը՝ ճարահատ, սպառնացել է նրան օրէնքի անունով:

Այն ինչ կինը վայրկեան չփախցրած դուրս է թռել փողոց, աղմուկ-աղաղակով զիսին է հաւաքել ողջ թաղը և լալով ասել է, թէ վարժապետը իր պատուին դեպել է. այրի. անտէր կնոջ անբարոյ խորացարկներ է արել, և իր մերժման վրայ սպառնացել է անմիջապէս իրեն՝ պզտիկ որի հետ փողոց նետել. միթէ հայութիւն է. խեղճ, աղքատ կնօթ հետ այդպէս վարուել...

Գէշ մարդիկ հաւատացնել են այս զրպարտութեանը լաւ մարդիկ չեն հւատացել: Եւ վարժապետի բախտից հաւատացողների թիւը աւելի է եղել:

Մինչ այդ՝ միջնորդներ են ծագել, և համոզել են կնոջը որ մի օրուայ մէջ հնեւանայ և բերանը գոցէ. դրա փոխարէն՝ վարժապետը հրաժարուի դրամական պահանջից: Հակառակ դէպրում ոչ ոք պատասխանաւու չէ, որ խայտառակութիւնը քաղաքի չորս ծայրը ձայն տայ, «Անուշի կապել բան, ուրիշ հար չկայ». այդ են պնդել սրտցաւ միջնորդները շարունակ:

Վարժապետը՝ յարկարծակի եկած՝ համաձայնել է լրեալ: Մի կողմիս էլ ընազդական վախ ունենալ թէ՝ կնոջական խորամանկութիւնից և թէ՝ դատարանից ու փաստաբանից:

Սակայն, այս դէպրը այնպէս էր շշմեցրել վարժապետին, և միմիայն այս գէպքի վերաբերմամբ այնպէս էր կողպուել նրա դատողութիւնը, որ մինչև վերջը էլ անկարող եղաւ նա իր այդ ապրուելը մի մտքի

մէջ ձևել:

Այս դէպքերից յետոյ ուրիշ անհաճոյ բան չի կը ատահել նրան, եւ տարիներից ի վեր ապրում էր նո հանգիստ ու անտենչ, սրանցից հիւսուած մի տեսակ զուարթութեան մէջ՝ ստէպ, այտնելով իր գոհունա. կութիւնը բարեկամներին.— «Հօգու Խաղաղութիւնն է զլխաւոր բանը, ու աշխարհն էլ մեր սրտի հայելին է. տխուր ես, արեւ աչքիդ կը սկսայ. ուրախ ես՝ պարտքերդ առնելիք կը դառնան»:

Սակայն, այս խաղաղ հոգով հոսող կեանք, նորից իր մշտական թաքուն հոգսը ունէր, մի բաղձանք — Աստուած հեռու պահէ կնոջից ու կուռից, փորձանքից ու բժշկից, դատարանից ու կառավարութեան դունից. և հնա՞ր էր արդեօք, երբ նրանք չորս կողմդ զրակ են ձգել:

Եւ ամէն օր, առաւօտ-երեկոյ, աղօթքի պէս կրկնում էր այս բաղձանքը:

II

ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ «ՄՏԱՅ ՄԱՏԵԱՆԻՑ»

- ✓ — Կարճ խօսքը նշան է երկար խելքի,  
Երկար խօսքը՝ կը բն խելքի:  
— Պարծենողին կը թռցնեն,  
Հազոր ձեռքից կը փախցնեն:  
— Ուրիշի համար լացողը  
Ուրիշի աչքով կը կուրանայ:  
— Մահը չլինէր,  
Թագաւորի անը հերիք էր:  
— Մեզ գրվողները խելօք կ'երևնան:  
— Հաւն որ դրախտ երթայ,  
Հաւեկիթ ածելն էլի շմոռնայ:  
— Հարուստ կինը զիխիդ կրւտայ:  
Գիտուն կինը բերնիդ կուգայ.  
Սիրուն կինը դէսից-դէնից  
Բնգի պէս-պէս զաւակ կուտայ:  
— Տեղ կուտաս կողտիդ.  
Կը նստին զիխիդ:  
— Ուրիշի վլասու  
Լինի՛ քո դասր:  
— Անգէտը չգիտցածից է գոհ.  
Գիտունը գիտցածից՝ աեզոհ:  
— Ամէն բան պատճառ կ'ունենայ,  
Դնկայ լացը անպատճառ է:  
— Աշակերտի խե՛լքը բաց,  
Բերանն ինքը կը բանայ:  
— Սորվեցնելով բան կը սորվիս:  
— Աշխարհի՝ վարժապետ,  
Մարդք՝ աշակերտ:  
— Յիմարը յամառ կը լինի,  
Նեղսիբառ՝ կուռւարար:

— Մարդիկ շատցան, իրար դիպան,  
 Տուգատն ընկաւ, ելան վրան:  
 — Վաճառականի երդումը  
 Կը քանդէ մարդու տունը:  
 — Շան յետև կեցիր,  
 Իշու առջեր:  
 — Քո կերածը որ փորս երթաւ,  
 Թագաւորին գլուխ չեմ տայ:  
 ✓ — Տղամարդը չէ հնկան սանձ դնողը,  
 Երեխան է կնկայ հոգին հանողը:  
 — Երկու կնիկ դրախտի մէջ  
 Կրբնան ապրի առանցի վէճ:  
 — Հարուստի հացը  
 Աղքատի լացն է:  
 — Փողն ու զող —  
 Իրար ծնող:  
 — Այսօրուայ համար տուն կը փորենք հողի մէջ,  
 Վաղուայ համար բերդ կը շինենք օդի մէջ:  
 — Երա Յիսուս ասաւ սիրիր թշնամուն,  
 Այն ժամանակ թիւրը չկար աշխարհում:  
 — Աղքատ կը նշանակէ աղիքահատ:  
 — Մարդը հող է, ուշըն ու միտքը՝ փող.  
 Հարուստ մարդն է չըռնուած զող:  
 — Էնեայ, եւայ, կորսրի, զտայ...  
 Շա'տ լսիր, քիչ հաւատա:  
 — Մինչեւ զարթնի ծայնը խրդեն,  
 Հոգին կու գայ բերանը խեղճի:  
 ✓ — Խոսքը կը քարտ զէ,  
 Դործը կը համոզէ:  
 — Մարդու թշնամին լրեն փորն է:  
 — Փող ունիս, կ'ասեն՝ աղա՝ Պետրոս  
 Փող լունիս, կ'ասեն՝ այ տղա՛յ Պետրոս  
 — Կեսն քը կարն է,

Յոյսն՝ երկար:  
 — Եթէ քարը ծառ դառնայ,  
 Ոսկի կացին քեզ ընծայ:  
 — Կը խոստանան —  
 Կը գօսանան:  
 — Ով որ կ'ասէ թէ կոփւր լաւ բան է.  
 Քլիսին պինդ զարկ, որ իմանայ՝ ինչ բան է:  
 — Հարուստը կը քաղէ նուշը,  
 Աղքատը՝ փուշը:  
 — Մարդը տաշեղ է, բախտը՝ զիւ քամի,  
 Ուր որ ուզենայ, կ'առնի, կը տանի:  
 — Ընկեր կը նշանակէ ընդկեր.  
 Հետո բանիր — հետո կեր:  
 — Հին ձորձը չի տաքցնէ.  
 Ամենօրուայ նոր գործը  
 Հին փորձը չի քէւցնէ:  
 — Ով որ ստեղծեց երկու բերան,  
 Աշխարհ ձգեց կուուի մէրան:  
 — Յոյսն իւրնիրենից կը գուանայ,  
 Ու ինքնիրենով կը գոհանայ:  
 — Ամուսին՝ մարդ ու կին —  
 Երկու հոգի — մի մարմին:  
 — Ժամանակի մաղարը  
 Կ'ուտէ ողջ-աշխարհը:  
 — Տանջուելով՝ ժամանակը երկարցաւ,  
 Երկարելով մեր խեղճ կեանքը կարճցաւ:  
 — Մօր լեզուն մոռցողը,  
 Հօր լեզուն իսկի չի լիշէ:  
 — Նախանձ ուրիշի վառքին,  
 Ոիրուն կնկան ու գանձին,  
 Կը նշանակէ, նախ իր անձին  
 Փոռքն ուրիշի, զանձ ու կին:

— Հայրըդ եթէիմօրդ անունով խոստում տար:  
Դրաւը առ, էլինորից մի՛ հաւատա:  
— Կնիկը շնչիդ նստողն է  
Պնչիդ զարկողը,  
Ընչիդ ուտողը:  
— Երկար չի կենայ փողը շռայլի քսակում,  
Սիրուն կինը մէկ մարդու գրկում:  
— Լաւ հաւը թըլսական կը նատի,  
Լաւ կնիկը տղոցկան:  
— Այն մարդուց վախեցիր,  
Որ քեզնից կը վախենայ:  
— Աշխարհը կայ ու կը մնալ,  
Մարդը կուգայ ու կ'երթաւ.  
Պատահմունքն է որ կոյր աչքով  
Մարդկանց պիտի կառավարէ,  
Մէկին մարէ, միւսին վառէ:  
— Բարեկամը հարստութեան պոչն է,  
Պոչն էլ հարուստի ճանչաքշիք:  
— Ե՛է մարդի բողկերն հաւար չեն իրար,  
Ուր մնաց մարդիկ աշխարհէ աշխարհ:  
— Ինկայ խուլը կայ,  
Մունջր չտեսայ:  
— Շա՛տ կարմունջի տեսակ ու ձեւ  
Անցայ, դարձայ.  
Հարուստի ու աղքատի միջև  
Կարմունջ չտեսայ:  
— Թանի սկ է թելը մազիդ՝  
Կը դիմանան հազար նազիդ:  
— Այսօր աշխարհ մանէ ման,  
Վաղը նեղիկ գերեզման:  
— Մարդ կը յուսայ գալիք օրուան,  
Գալիք օրը՝ անելք զնդան:

## ՉԱԼՕՆ

Դրեց՝ ՀԱՄԱՍՏԵՂ

Աւելի ծեր քան մեր գեղին երեցփախը. սակայն անոր  
պէս ակնոց չէր գործածեր Զալօն:

Երկու լայն երեւներու նման երկու ականջները կախ,  
պոչը՝ թոյլ, այլեւ կռնակին վրայ կծկելու անկարող:  
Ծանր ու միշտ վար ինկած կոպերը աչքերուն մելամաղ-  
ձօտ երեսոյթ մը կուտային: Դէմքը խորհրդաւոր էր մաս-  
նաւանդ, երբ ճամբաւն վրայ, միսմինակ, դունջը լուսան-  
կային տնկած, լուսնկան կը հստոււ տար:

Մէր գիւղի լուսնկան ալ, բոլոր գիւղի լուսնկաներուն  
պէս, եկեղեցիին գմբէթէն չէր հեռանար. շատ անգամ  
անոր վրայ կ'իյնար. հոն կը հանգչէր Զալօնն գունջը,  
հիւսիս երկարող մագնիսի մը պէս, այն կողմն էր միշտ,  
կը կաղկանձէր ու կ'ոռնար պղնձիք պէս արձագանդուազ  
քարարներու ձայնով:

Ու ա՞ւ... ուառւ... ուառւ...

«Զալօ, օշա, Զալօ», — կ'արթնիային, ձայն կուտած  
իին դրացիները: Եւ Զալօն լուեցնելու համար մութին  
մէջ կոշիկի կուժիք կոտրներ վար կը նետէին:  
Դէշ նշան էր:

Զալօն կը սթափէր. կը ճանչնար անոնց ձայնը: Ցուիս  
քին մօտ, շապիկ մը վրան մերկ որունքը քերողը, Ուսո-  
տա Զաքարին էր:

«Հէ՛, Զալօ, օր մ'ալ ևս Սուբբէկին մեռնելու խաշ  
պարը չտա՞ս»:

Կը կատակէր Ուստան քնէն թափթփած աչքերու  
ինդու քով:

Ծեր, իր կեանքին վրայ գողդողացր որ, և այրի Սուրբիկը. Կը լսէր, փոքրիկ պատուհան էն կախուած դեղին սեխի մը պէս, դէմքը երեցնելով կը հայնոյէր, կը աըրարարար, մութին մէջ կ'անիծէր սնվերջ:

Ուստա Զաքարի հաճուքն ալ այդ էր:

Շատ անգամ մեռել չկար: Սակայն օվ հասկցած էր Զալօյին և լուսնկային գաղանիքը կախարդական, — այս քան կախարդական, որքան գմբէթին և լուսընկային մտերժութիւնն էր Զալօյին համար:

Զալօն կը լուէր. Կը սիրէր իր մաերիմձայները լսել իր մինակութիւնէն չսարսափելու համար: Ուտքերուն վրայ կ'ելլէր, պոչը կ'երեցնէր, յետոյ, երբ Ուստան հեռանար ցուիքէն, Զալօն, շիներուն վրայ կ'երկննար, յեզան ներս կ'առներ, ու դունջը՝ երկու խաչածւ ոտքերուն վրայ երկնցուցած՝ կը քնանար անհանգիստ, ընդհատ ընդհատ կաղկանձումով:

Լուսութեան մէջ Զալօն քանի մը անգամ գլուխը վեր կ'առնէր: Ոյինչ թերևս ցուիքէն կատու մըն էր, որ անցաւ, և կամ փողոցին հսկայ սայլն էր, որ մեծ շունչ մառաւ:

Է՞ս սա սայլերը ո՞րքան ծոյլ ու խորունկ կը քնանան, չեն արթննար, մինչև որ մարդիկ չգան, չըմշտկին, ասկանիներ չանցին, եզներ չլծեն. այն ատեն միայն կ արթրննան, ու կը սկսի դէպի դաշտ քնաթաթախ, լալկան ժղրտուք մը, — կը մասածէր Զալօն:

Լուսս դէմին, խորունկ անդունդէն եկող ունաձայնէ մը կ'արթննար միշտ: Զալօն կը ճանչնար այդ ոտնաձայնը. կ'ելլէր, կոնակին փոշիները կը թօթուըռտէր, բերանը լայն բացած կը յօրանջէր ու կը քալէր այն ուղարթեամբ, ուրկէ ժամկոչը պիտի դար:

Զալօն, պոչին վրայ քսուելով կը մատենար անոր, ինկահատ փէշերը կը հոտուըքար այնպէս ինչպէս բո-

բոանէր Յիսուսի գէշերուն պիտի քսուէին, ջերմեռանդ ու երկիւղածօրէն: որովհետև Չուօին. համար բովանդակ տիեղերքին մէջ չկար անքան ամենակարող մէկը, որ քան ժամկոչն էր:

Արել անոր ոտնաձայն էն կ'արթննար, աստղերը մէկրկ մէկիկ կը պահուէին, լու նկան կը դժունէր, թիթեղի գոյն կ'առնէր, երբ ժամկոչը դուրս ելէր առւնէն: Անոր ոտնաձայնէն պատերուն ստուերները աենդէ բռնուած՝ կը դողդողային: Արգեօք ժամկոչին հրամանովը չէ՞ որ յուրնկան գիշերները գմբէթէն չէր հեռանար: Ժամկոչը եթէ ուզէ նոյնիսկ, մսավաճառ կրտեղի բոլոր մէսերը վար կ'առնէ ու շուներուն կը բաշիւէ: Ժամկոչին զօրութիւնը մնձ էր Զալօյին համար:

Իւաւ ալ ժամկոչի ոտնաձայնէն արեւը կ'արթննար, աքուղներն անոր անցքը կը շեփորէին: ստուերները, տան սողնոցներէն ներս անկիւնները կը սողոսկէին:

Գիւղին մէջ կը սկսուէր եռուղեա մլ:

Գոթանենց տան մշակները եզները գուրս կը հանէին, խոփերը կը չնչեցնէին՝ ակամայ քարերուն զարներով, եզներու վզին սամիները կը կուպէին ու քոթօթ, յէկ ասկանին ներսի մասը գուրս շրջուած իշու մը վրայ կը բառնային սերմյու ցորենը:

Զալօն նոն էր իր ետևի երկաւ ուտքեռուն վրայ պազած՝ իր թաւ պոչը գետին եր զարնէր, — նշան իր բարի ու անսահման ուրախութեան:

Ո՞րքան կարօտցեր էր մարդիկ:

Ու ձիերու մետաղային խրխինջներու ու արտաղաղներու սուր կանչերուն ու մշակներու աշխատանքին հետ Զալօն ալ մերթ ընդ մերթ իր բակը ձայնը կը ձգէր՝ դոհ և ինդումերես:

Զալօն, իր ծանր պոչը գետին քսելով, վիզը կախ, մինչև նաշաղբիր ճամբու կը գնէր մշակները ու կը

վերադառնար հոն, ուր յօւկայի քոթոթ շուները՝ վաղ ուց դիրք գրաւած՝ անհամբեր կը սպասէին մսավաճառ կիւր բղին:

Կիւրեղ կ'ուշանար:

Շուներէն շատերն, իրենց վրայ քթուրտելով, զատղուած էին. մէկը իր վէրքը կը լիզէր. ուրիշ մը եւրեք ուաքերու վրայ կաղալէն դեռ նու կուգար. մէկալը քրերուն վրայ չորցած արիւնը կը լիզէր. Տվոր ու քոստա չուներ՝ մաղերնին թափած:

Այդ բոլորին մէջ է'ն լւորիը Զալօն էր. — մասձկա գմագծով, պատկանելի, ինչպէս դատաւոր:

Կիւրեղ կուգար իր ատենին. սակայն շուներուն այսպէս կը թուէր, թէ կուշանար:

Փողոցի անկիւնէն կը աեսուտէր Կիւրեղը, իւղու կողմակը մայր տօմարը անութին տակ. այս անգամ այծի մը հետ կը քաջուէր:

Կիւրեղի ամէն մէկ շարժումին կը հեռեէին շուները: — անհանգիստ, ալուրլուկ աչքերով: Երբ ան պատահաւար իրենց մօտենալու ըլլար, բոլորն ալ իրարու վրայ կ'իշխային, ճամբայ կուտային: Ուսոր տրածադրութիւնը հանիւալը շուներու համար շատ լիքուար և իմաստուն աշխատանք էր:

Ե՛ւ, ի՞նչ ուժ. Կիւրեղ մատի փոքրիկ շարժումով մը կը բանար դուռը: Շուները անոր ուժէ, անոր դիւտ յէն կերպարանքէն կը սարսափէին. որովհետու շատերը անոր հարուածներէն հայմանգամ դարձեր էին:

Շուներուն այնպէս կը թուէր, թէ Կիւրեղի դէմքեն բուրոյ զգայարանքները իրենց տեղերէն խախտած էին: Այդ երկութը կուտային մասնաւորապէս անոր թաւ յօնքերուն տակ ատլաստանող շիլ աչերը: Խոշոր քիթը կարծես ճակատին մէջտեղէն կախուած էր. ականեները ոիսու շարուած էին. ականջները վեր վար փակցուած: Անոնց

այնպէս կը թուէր, թէ այդ զգայարանքները բոլորը մէկ կը շարժէին, երբ կը բարկանար և կամ մտին գինը կը պոռար: Զալօն մանաւանդ աչքերը չէր հեռացներ կիւրեղին եղջիւրածեւ պեսներուն քովի այն խոշոր խալէն, որ պիծակի գոյն, պիծակի ձեւ ունէր, սակայն քթին քովէն չէր հեռանար:

Կիւրեղ դանակ վ լիցուն կաչէ գօտին կը կապէր, արիւնոտ, կապոյտ շապիկը կը հագնէր ու դուրս կ'ելէր:

Հօն այծին շուրջը կը հաւաքուէին գեղին կօշկարն ու արօր, մաճ շինող Ուստա Զաքարը. կանուխ կուգար նաև երէցփախը իր ճաշին համար լաւ երշիկցու մը ասպահովելու:

«Եւս մասցու է, հը» , — կը գովէր երէցփախը:

Զօլին կարծիքն ալ այդ էր:

Մինչ այծը կ'օրօնար արագ, մկանատինման իր կզակները շարժելով: Անէր փոքրիկ մօրուք մը, որ կը շարժէր կզակին հետ արագ արագ: Անօր աչք'րը, կոպտորակ քարհրուն ու կանաչ մամուռներուն վրայէն սահող տուակի գոյնն ունէիր. անմեղ, սիրուն այծ մը, որ թերս երէկ. բլուրին վլայ, փունջ մը խոտ բերանին կապոյտ ճանձի մը, բզգիւն կ'ուն ը յրէր այժմ անգիտակ իր լուսանին կ'օրօնար, լաճախակի կմխակները գետին կը զարնէր աղասոտ ճանձիրը քշերւ: համար, նոյնիսկ եղջիւր իր բոնէր իրեն շատ մօտեցող աղտօտ շուներուն:

Կիւրեղ անգամ մըն ալ իր դանակը երկաթին կը քսէր ու այծին կոտաներէն կը քակէր կապը. յետոյ դանակը կը խած էր, մ ջքը ղեկ մը ակս այծին վրայ կը ծոէր, կը բռնէր անոր երկու ու քերը գետին կը ձգէր:

Այծը կ'աշակէր, օտարոտի ու լուկան մայիւնով: Ցորե աններուն վրայ բոլորակ դարձող փոքրիկ փոթորիկ մը կ'ըլլար, կը ցնցուէր, կը թփրտար. այդքան միայն: Սրիւնը մինչև շուներուն վրայ ցայտէր: Շունե-

աւելի կը մօռենային, կը խոռոյի՛, եր խրիտափին, արդւշը լակելու համար զիրար կը հրմակէին:

Այդ շուներուն մէջ առաջնութիւնը Զարինն էր. շատ հեղ ու րիշ խօսոր շան մը հետ, դէյ դէմի, կը սկսէր շատ կաւ, ճ գզուբառուք Շ'Ը, որ կը վերջանար իր յաղթութիւնով. քուրաներուն մէջէն յանկարծ կը պատժէր փոքրիկ, աներես չնիկ մը, որ ճշալով անկիւն մը կը քայուէր:

Շուները կը վախնային Զալօէն, թէւ արիքոս, սակայն վարպետ կոռուզ մըն էր:

Մատղաշ արեց ճարպոտ մսի գոյն — ինչպէս կը նրա կառէր Զալօն — ցուիքներէն վար կը կախուէր ու հետրդէնետէ վար կուզար, և կը ճերմկնար, կը հասնէր մին, և ա, ծի փոռուած փոսդին, որուն վրայ կիւրեղ փոքրիկ կացինով այծի սակորները կոտրած ու ջարդած էր միւր, որ ներկուած էր կարմիր ու ճերմակ գեղեցիկ գուշներով:

Կիւրեղ մսի կաորները կեռերուն վրայ կը շարեր, Օ՛հ, այդ կեռերը այն քան բարձր էին Զալօին համար, որ քան երկինքն էր:

Շուներէն շառեր կը սպառէին. կացինի հաբուածներէն նետուած սակորի կառուներուն ետեւն կը վազէին. կը սպասէին, մինչև որ բոլոր կիսերը կեռերուն վրայ կախուէին. մինչև որ կաօր կաօր ծախուէին. մինչև որ միւր հատնելու ըլլար:

Զալօն սպասող. շուներէն չէր: Երէցփոխին ուստիրուն պէս կը հաւաքէր իր պոչը ու իր բնակած փողոցը կ'օրթար, ուր արդէն մասուկները վազուց արթնցած էին. բուխերիկներէն ծուխը վազուց սկսած էր, ու ժամաներ գւարս կուզային. Զալօն եկեղեցին ճամրու՛, վրայ կը հենար, կը խոռուէր անոնց հետ ջերմեռանդ ժամառիք մը պէս:

Ժամառիքները կ'անցնէին: Արևին հետ, փողոցին մէջ, կը մազուէր հացի բարկ հոս մը:

Գոթանենք եաց կը թիւէին:

Բարկ թանիքին վերև, հացթուխւ՞ բացին կարմրած, թօնիրին վրայ կը ծռէր, կ'ելլէր. — վրան գլուխւը գորչ շորերով փաթաթուած: Հարսներ, աղջիկներ գունդ կը գնաէին, պլիկ կը բանային մեծ ու կլոր լուսնկին պէս: Պիկները խոնջայէ խոնջայ կը նետէին, մինչև որ կը հասնէին հացթուխ Ստորիկին, Ստորիկը կ'առուներ, մալէզ կը քսէր ու արագ շատ արագ թօնիքի կարմիր կողին կը ասնէր:

Լուս ու հանգարա չուքի մը պէս՝ կրակատն գռան վրայ կեցոզը Զալօն էր: Դլուխը վեր վար կը շարժէր, պոչը կ'երեցնէր: Օ՛հ, ա, դ պահուն, անոր աշքերը որոքան բարի էին, մեռանի գոյն ունէին, կարծես մեռանի երկու խոյսը կաթիլներ էին:

Զալօն աներես չէր. ներս մանել չէր համարձակեր. միայն դունջը մարմնոյն հետ առելի ներս կ'երկարէր երր մէկը պատահաբար իրեն մօտենար:

Զալօին առջն շատ անդամ ամբողջ հաց մը կը նետէին. որովհետն վազոցին փարձուու պահակն էր. առները կը հսկէր: Ցանիքներուն վրայէն շատ արագ անցնող հովն իսկ կ'իմացնէր:

Զալօն: գոհն կուշած ետեւը երկու սոքերը կը ծալէր. իր պոչին հետ, առջնի երկու սոքերը երկնցուցած, սեմին քով կը պատկէր: Ան չէր շարժեր նոյ, իսկ, երբ հաւները պոչին վրայէն անցնէին և կամ հաւձագ մը անոր կոնակին վրայ թառէր մէկ սափ վրայ:

«Պերէմիրով ըլլի խաթունց»:

Զալօին յետոյ ալս անգամ հ-ցին հոտը առնօզը կուզմուրացիկն էր: Վախվիխելով ձնոքին փայտը միշտ Զալօին կ'ողմ բոնած: կ'օրնիէր տունն ու տաւարները. Զա-

Նիւ հարսներուն երկար արև կը բաղձ որ. Հալո Արրա-  
համու սեղանին արատութիւնը կը ցանկար բոլոր տու-  
ներուն: Մուրացիկը չէր արտնջար, կ'օրհնէր միւնոյն  
անկեղծ բազմանքով, եթէ մերդէին նոյնիսկ: Սակայն  
խոշոր դռներով, մածկակ ախոռով գեղացունտունէն ով  
կը ար մերժել:

Զալօն աչքերուն ատկէն կը նայէր, կը գմոտար,  
Տոյնիսկ անեցիներուն ծառայութիւն մը մատուցած ըլ-  
լալու համար քանի մը անդամ մուրացիկին վրայ կը հա-  
ջէր ու կը լուէր, երբ իր անունը տային: Սակայն Զալօն  
մրշա կասկածոտ էր, կիսախուր աչքերով, ատեն ատեն  
վեր կ'առնէր իր կտպերը ու կը նայէր, մինչև որ հեռա-  
ւար մուրացիկը:

Ամառուայ տաք միջօրէի մը, գիւղը գոեթէ ամայի  
էր, դպրոցը՝ փակուած, գիւղացիները բոլորն ալ դաշտի  
աշխատանքի վծուած էին Շուները շողուն, առուին ե-  
ղիրքները կը պառկէին և կամ բաց մնացած՝ տուներէն  
ներո, թաց ու զով տեղեր կ'ապաստանէին: Զալօն դրաց  
լոց ճամբուն վհայ, մի մինակ, արեին տակ կեցած էր,  
— անորոշ ու մելս մաղձառա:

Այս օրը գպրոցի մանուկներուն ան ի զուր սպասեց:  
Քանի մը անդամ մինչև գպրոցին դուռը գնաց. փոկ էր.  
Թաթերը զուան վրայ անորոշ աղմուկներ ըսաւ: Դպրոցի  
բակը ամայի էր, ինչպէս թափուր մնացած փնթակը մե-  
դուն երուն:

Այսարի ի՞չ շուտ փօխունեցու: — Ժտածեց Զալօն:  
Անօթի էր: Դունջը Դոթանենց բաց մնացած դունէն  
ներս երկնցուց մարդ չկար, հաւերը միայն, բակին միջ՝  
անպէտ ձգուած երկրագործական գործիքներուն վրայ  
թառած, սկսած էին ձայնաւոր եղերական կրկոց մը,  
Անդին, տան կատուն արօրին տակ ինքինք կը պահէր,

Ու տանիքին վրայ անձեղ մըն ալ, փայտեայ ձողի  
մը վրայ թառած կը կանչէր խեխու ու խաթուն Մամա-  
լին օճառը գողնալու համար լու առիթի մը կը սպասէր:  
Զալօն քանի մը անդամ հաջեց. մարդ չկար:

Անտարակոյս աշխարհի փոխուած էր: Այդ օրը, չոր-  
րորդ անգամն ըլալով, Չոլո՛, կիւրեղին խառն թին առջեւ  
կանգնեցաւ: Կեսներուն վրայ ոչինչ կար, միայն ուրի մը  
թոքը, ան ալ մեղուներուն ու ճանճերուն կեր դարձած:  
Իսկ կիւրեղ անդին կօշկակարին հետ խօսքի բռնուած էր:  
Զալօն կամաց մը խանութէն ներս մտաւ ու աճապա-  
րանքով՝ ուրի ոտք մը իւածած՝ դուրս ելաւ: Կիւրեղը  
տեսաւ, հաւար տուաւ: Մեծ դանակն առաւ, վազեց ու  
շիտակ Զալօնի կոնակին իջեցուց:

Զալօն ձգեց ուրի ոտքը. վայնասունը ամբողջ գիւղը  
րռնեց — այնքան աղաչաւոր, որքան հզեհուած նաւի  
մը ընկդմումը:

Այդ օրը, Զալօն ամբողջ օրը իր փոշիէ անկողնին վը-  
րայ, կզկզաց: Արիւնը Կ'իջնէր, կը փորձեր Վէրքը լի-  
զել. սակայն վէրքը թիկունքին վրայ էր. երկար լեզուն  
հաղիւ կը համայէր:

Երեկոյին, երբ գիւղացիները դաշուն գիւղ վերա-  
դարձան, նորէն՝ աղմուկ, նորէն կետնք. փալոցը ծիծա-  
դով լեցուեցաւ: Բաց այդ օրը Զալօն իր տեղէն չէր  
կրնար շարժիլ:

Քանի մը օր յետոյ Զալօն սկսաւ քալել ուսեղած  
վէրքով. ու այլևս կիւրեղի խանութին առջև երթալ  
չէր համարձակեր: Հեռուէն, երբ կիւրեղի ոտնաձայնը  
կը լուէր և կամ անոր կապոյտ շապիկին հոտը կ'առնէր,  
Զալօն՝ պոչը փօրին կպցուցած՝ կը վազէր ու սայլերուն  
տակ եր մոնէր:

Զալօնին վէրքը հետզհետէ օրդնոտեցաւ, այլևս ան.  
տանելի գարձաւ, երբ տուն մը մտնէր, անեցիները ի-  
րար կ'անցնէին, վայտի անխնայ հարուածներով Զալօն  
դուրս կը ձգէին: Դօթանենց դուռը անոր դէմ գոյնեցին

իւ պառ. պատահաբար ներս որ մտնէր, անոր ետև տան  
երկաթէ ակիշը և կամ աւելը կը նետէին; Երբ մարդե-  
րու մօտենար, ոտքի հարուածներով կը հեռացնէին: Ա-  
նոր վէրքը անտանելի էր:

Զալօն այլես կծկուած, պոչը միշտ ետևի սրբւթե-  
րուն մէջտեղ, փողոցին վրայ, անպէտ. զլանը կոտրուծ  
ուուլին տակէն դուրս ելլել չէր համարձակեր: Կը վախ-  
նար մարդէրէ:

Զալօն սալիին տակ կմախք դարձաւ. կռնակը աղեղ-  
նաձև, մազերը սկսան թափի: Մոռթը շերտ շերտ կողե-  
ր, ու մէջ մտաւ: Երբեմն միան սայլին տակէն դուրս կ'ու-  
ր, երբ փողոցը մարդ չկա: ու քնէն նոր արթնցած,  
լէր, երբ փողոցը մարդ չկա: աւ քնէն նոր արթնցած,  
լէր խոչը հացի կտոր մը ու նուէն կը պահուէր:

Շատ ա՞ գու մ իրեն շատ ծանօթ մանուկն երբ կուգա: Ին-  
սայլին շուրջը կը հաւաքրւէին, հացի կուրդն եր նետեւրվ,  
դուրս կը կոնչէին:

«Զալօ, դուրս եկ, Զալօ»:

Զալօն կը լսէր անոնց ձայր: Ա՞խ, ոռքա՞ն կը սիրէր  
դուրս ելլեր, անոնց ձեռքերը լիզել, նորէն բարեկամ  
ըլրաւ անոնց հետ: Մարդիկ լիչ չուտ չար եղան:

Զալօն գլուխը գեր կ'ուուէր պահ մը ու յետու՝ լե-  
զուն կախ՝ աչքերը միշտ գետնին կը մնառ մատածուտ,  
Ան քէն ըր սծ էր նաև մանու կներէն: Ռովիւտու եղած է-  
ին չարեր, որ էր ետև քառ նետած, նոյնուսկ փոյ ձած էին  
իր պոչէն թիթեղէ կին դոյլ մը կամ ծանր քուր մը կապեր:

Այխարն փոխուած էր, ու Զալօն հնասկցաւ. Աէ ին-  
չու իրեն համաւ այս սնգամ լուսնկան ու մենութիւնը  
աւելի միխթարական էին, քան ցորեկները: Գիշերները  
աւելի միխթարական էին, քան ցորեկները, Զալօն սայ-  
միտն տակէն դուռս կ'ելլէր, նունեսկ մինչև կիւրեղին խա-  
ռութիւն մօտերը կ'երթար ու կը թափառէր քնաշրջիկի  
մը պէտ:

Գիշեր մը Զալօն աւելի հեռացաւ, դուրս ելաւ ու

ինքզինք տարիեր աշխարհի որ մէջ գտաւ: Հին տուներ  
չկային, զինք սարսափեցնող ունաձայներ չկային, հոն  
չկար գմբէթ: Այնուեղի լուսնկան բարափի մը ծայրէն  
կախուած էր ու մտաւ կանեփներուն մէջ:

Զալօն հեռացած էր մարդերէն, մարդերէն ստացած,  
վէրքը կրնակին:

Ամէն կէս գիշերին, երբ գիւղին վրայ աստղերու լը-  
ռութիւնը կախուած էր, կանեփներէն կամ չհնձուած  
սորեան երէն կը լուսէր ահաւար ունուկ մը: —

Ուառու... ուառու... ուառու...

Զալօն կանեփներէն դուրս կուգար, գիշեր ատեն:  
լուսնին տակս իր սկրուտ, աղեղնածև կռնակով՝ ա-  
պառաժի մը վրայ տեղաւորուած՝ այս անգամ դունչը  
գապի գիւղ, կ'ոսնար: Անը ձայնը աստղերէ ասաղ կը  
գզրդար, կարծես Նիրվանայի յաւիտենական պարապու-  
թեսն մէջ ըլլար:

Զալօն ատեն ատեն մինչև գիւղ կ'իջնէր, երբ ամէն  
ինչ լուս էր, երբ լուս էին նոյն հսկ գիւղին շուները:  
Ան, ոտքերը փարտ զրած՝ կը կենար գիւղին ձայրը,  
ճամբային վրայ ու կը հաջէր ծնր ձայնով: —

Հօֆ, հօֆ, հօֆ...  
Անոր հաջիւնը գիւղին մէջ կը ձգէր չոփ չոր արձա-  
գանգ մը, ան կը քալէր, լինէ, լինէ ամայի գիւղին մէջ,  
Անչափէս անօթի ու նիհար գայլը անտառին: Ան շատ ան-  
գամ շուներու լակոտներ կը յափշտակէր ու կը մտնէր  
կանեփներուն մէջ:

Գիւղացները կը սարսափէին անոր ձայնէն: Ան գա-  
պանը կը հետապնդէր զայն սպաննելու համար: մանա-  
պանը կը հետապնդէր զայն սպաննելու համար: մանա-  
պանը պորիկ մը, պոչը փորին տակ պահած, վիզը  
կախ, կանեփներէն գուրս ելած էր ու, գաղտուկ  
անցորդի մը քսուելով, խածած էր անոր սրունքը:  
Խածած էր, նաև թումբերէն խոտ քաղոզ քանի մը գիւ-  
ղացի կիւներու կրունկները: Զգիտես, օր տեղէն կամաց  
մը, բուփի մը տակէն դուրս կուգար Զալօն ու կը

Խածնէր:

Զալօն կատած էր. անոր բերներն շուրջ փրփուր  
տնսած էին:

Այ ձրւութ, աշունի մութ զիշեր մը, Զալօն նորէն  
գիւղ իջաւ: Զայն ձուն չկար, մութիս մէջ անձրեն էր  
միայն, որ առէջ առէջ վար կուգար. ու մէկ մըն աւ  
տանիքներէն վեր, տարածութեան մէջ ու մնացած ագ.  
ուաւի սև թև մը կը շարժէր:

Զալօն, դունջը՝ գետին պատերուն տակէն ծանր ծանր  
կը քալէր. անոր աշխերուն մէջ կածես վառուած սոկոր-  
ներու կանսչորակ բող մը կը ծիսար: Գիւղին ծայրը, տան  
մը մէջ, տեսու, որ ճրագ կը վառէր, ու լսեց նորածին  
երսխայի մը առաջին ճիշը: Յետոյ, կիւրեղի խանութին  
առջև կեցաւ պահ մը: Անցաւ ձէթ քարին քովէն, ուր  
յաճախ ժողովի նոտած էր գիւղի սեծ սմեծն երուն հետ,  
ու մտաւ Գոթանոց փողոցը, որ իր փողոցն էր. կանգ-  
նեցաւ ոյն ճամբուն վրայ, ուրկէ ժամկոչը կ'անցնէր,  
կ'անցնէրն ժամւըներն ու մանուկները դպուցին:


Հեղ մըն ալ, պո՛ւմ... լսուեցաւ հրացանի պայթուն  
մը. յետոյ՝ կալճ վայնասուն մը ու փախչող ուժերու-  
ձայներ:

Դրացիները աւթնցան, դուրս թափուեցան ճրագնե-  
րով ու գտան Գոթանենց լաւագոյն եղբ, Պորօն, փողո-  
ցին վրայ կեցած, անտարբեր, իր վնջածակերուն յարդե-  
րը կը ժամբէր: Գողերն իրենց աւարը թողուցեր ու  
փախեր էին:

Քանի մը քայլ հնոու, հոն ուայերուն քով, գտան  
նաև շատ նիւարցած ու շատ ծեր շան մը գիւակը:

Ճանչցան: Զալօն էր:

Գողերը գն գակով սպանած էին:



29246

2013

